ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» մարտի 2014թ. N ____- Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ
ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2014 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.95-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Սիսակյան փողոցի հ.22 շենքի հ.13՝ 73.9քմ մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման հ.15052013-01-0182 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Արարատ Աղասյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն որոշման նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականություն համարվող Սիսակյան փողոցի հ.22 շենքի հ.13՝73.9քմ մակերեսով երեք սենյականոց բնակարանն անհատույց սեփականության իրավունքով տրամադրել ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ (2008), ՀՀ պետական մրցանակի դափնեկիր (2009), Սանկտ Պետերբուրգի գիտությունների և արվեստների ակադեմիայի թղթակից անդամ (2009), ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանին:

Արվեստաբանական կրթության մոսկովյան փայլուն դպրոց անցած՝ Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի պատմության ֆակուլտետի արվեստաբանական բաժնի շրջանավարտ Արարատ Աղասյանը հայ կերպարվեստի պատմության լավագույն գիտակներից է, ում գիտական նախասիրությունների հիմնական ոլորտը 19-20-րդ դարերի հայ կերպարվեստի ու գեղարվեստական մտքի պատմությունն է: Ա.Աղասյանը հեղինակ է բազմաթիվ գրքերի, մենագրությունների, ինչպես նաև գիտական և գիտահանրամատչելի հոդվածների, որոնք լույս են տեսել ոչ միայն Հայաստանում, այլև եվրոպական երկրների պարբերականներում և գիտական ժողովածուներում:

Գիտության հմուտ կազմակերպիչ Ա.Աղասյանը 2003 թվականից ղեկավարում է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտը:

Վաստակաշատ արվեստաբանի գիտական և գիտակազմակերպական աշխատանքը հաջողությամբ զուգակցվում է մանկավարժական և հասարակական ակտիվ գործունեության հետ: Նա տարիներ շարունակ դասավանդում է նաև Երևանի պետական համալսարանում և Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում՝ սեփական փորձն ու գիտելիքները փոխանցելով ապագա արվեստաբաններին: Նրա գիտական ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 11 դիսերտացիա:

Ա.Աղասյանը պարգևատրվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության Ոսկե հուշամեդալով (2008), ՀՀ մշակույթի նախարարության Ոսկե մեդալով (2008), ՀՀ պաշտպանության նախարարության Գարեգին Նժդեհ մեդալով (2012):

Համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տեղեկատվական կենտրոնի տվյալների, Արարատ Աղասյանի անվամբ Հայաստանի Հանրապետությունում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ:

Արարատ Աղասյանը իր կնոջ և երկու որդիների հետ մշտապես բնակվելով Երևանում, ցավոք, ունի բնակարանային պայմանների խիստ կարիքավորություն: Հաշվի առնելով նրա մասնագիտական կարողություններն ու մարդկային որակները, ինչպես նաև բնակարանային պայմանների բարելավման խիստ անհրաժեշտությունը, ստեղծագործելու համար պայմաններ ապահովելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել Սիսակյան փողոցի հ.22 շենքի հ.13 բնակարանը նվիրել նրան, որը թույլ կտա արվեստի վաստակավոր գործչին լիարժեք ստեղծագործական գործունեություն ծավալել:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ